Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի հանրային քննարկման և հանրային լսման վերաբերյալ

2026-08-18 12:54:12

Հայտատու	Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
Տեսակ	Հանրային ծանուցումներ
Հիմք	ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշում

Հանրային քննարկման է ներկայացվում «Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1323-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագիծը:

Վերջինս զետեղված է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ https://www.e-draft.am/projects/10522 հղումով:

Նախագծի ընդունումը բխում է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի հավելվածի 82-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության դրույթից, որով ամրագրվում է Ակադեմիական քաղաքի ստեղծումը՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 26-ի N 228-Լ որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման նպատակներից: Նախագծի ընդունման անհրաժեշտության մասին հիմնավորմանը կարող եք ծանոթանալ այստեղ:

Նախագծի վերաբերյալ հանրային լսումը տեղի կունենա 2026թ. օգոստոսի 25-ին՝ ժամը 14:00-ին, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեում (ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց, 22): Վերջինիս մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես հայտ ուղարկել public@hesc.am հասցեին կամ զանգահարել Կոմիտե՝ 010 300 109 հեռախոսահամարով:

Նախագծի վերաբերյալ առաջարկությունները կարելի է ներկայացնել մինչև 2026թ.

օգոստոսի 26-ը ներառյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում կամ ուղարկել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե (Օրբելի եղբայրների 22, էլ. հասցե՝ info@hesc.am):

37410300109

info@hesc.am

ԱՐԱԲԿԻՐ ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ Փ. 22